ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

РЕЦЕНЗИИ

Ջ. Ս. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, *Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1914—1916 թթ.)*, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1965, 512 էջ, գին՝ 95 կ.:

Վերջերս լույս տեսավ պատմական գիտությունների թեկնածու Ջ. Ս. Կիրակոսյանի «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1914—1916 թթ.)» ծավալուն մենագրությունը, որը լուսաբանում է հայ ժողովրդի մեծ ողբերգությունը՝ 1915—1916 թթ. եղեռնը։

Քննարկվող աշխատությունը կազմված է հետևյալ չորս գլուխներից. 1. Արևմտահայության ծանր գոյավիճակը Թուրքիայում պատերազմի նախօրյակին. 2. Հայկական հարցի վերաբացումը առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի սկզբին. 3. 1915 թ. մեծ եղեռնը. արևմտահայության գենոցիդը. 4. Միջազգային իմպերիալիզմը թուրքական ջարդարարության մեղսակից։ Գիրքն ունի նաև վերջաբան և օգտագործված նյութերի, գրականության, անձնանունների ցանկ։

Մենագրության առաջին գլխում հանդամանորեն քննարկվում է 1908 թ. Երիտթուրքական հեղափոխությունից հետո օսմանյան կայսրությունում ստեղծված իրադրությունը՝ մասնավորապես ոչ թուրք ժողովուրդների ազգային և սոցիալական ճնշման ուժեղացման, ազգային-ազատագրական շարժումների զարթոնքի, Երիտթուրքերի մեծապետական շովինիզմի հետագա ակտիվացման առնչությամբ։

Երիտթուրքերի վերնախավային հեղաշրջումը չլուծեց հեղափոխության առաջադրած սոցիալական ոչ մի խնդիր։ Օտարերկրյա կապիտալը, ուժեղացնելով իր ներթափանցումը Թուրքիա, ավելի ու ավելի կախման մեջ դրեց իրենից Երիտթուրքական իշխանությանը՝ տնտեսության և քաղաքականության բոլոր ոլորտներում։ Հենվելով մինչկապիտալիստական, ֆեոդալական շահագործման ձևերի վրա՝ եվրոպական կապիտալը ավելի անտանելի էր դարձնում ընչազուրկ գյուղացիության շահագործումը՝ միշտ էլ հանդես գալով գյուղի պարազիտային տարրերի, պետական բյուրոկրատիայի հետ միասնական ճակատով։ Այս գլխում հեղինակը առանձնակի ուշադրություն է դարձնում օսմանյան կայսրության ամենացավոտ հարցի՝ ոչ թուրք ժողովուրդների ազգային ճնշման վրա՝ բազմաթիվ փաստերով ցույց տալով, որ Երիտթուրքերը շարունակում էին ճնշված ժողովուրդների նկատմամբ արյունարբու Արդուլ Համիդի վարած քաղաքականությունը, դարձնելով այն ավելի հետևողական ու ինտենսիվ։ Այդ էր պատճառը, որ կայսրության ոչ թուրք ժողովուրդների, մասնավորապես արևմտահայության սոցիալական և ազգային առանց այն էլ անտանելի գոյավիճակը ավելի վատթարացավ Երիտթուրքերի իշխանության օրոք։ «Կայսրության ճնշված ժողովուրդների աչքում,— իրավացիորեն ընդհանրացնում է հեղինակը,— թուրքական պետական բյուրոկրատիան՝ ոչ արտագրող, մակարույծ, սպառող տարրը, դարեր շարունակ տիրապետելով հանդես էր գալիս և՛ սոցիալական հարստահարչի, և՛ ազգային ճնշման մարմնավորողի դերում» (էջ 15)։

Ուշագրավ են գրքում բերված վիճակագրական տվյալները ու համեմատությունները արևմտահայության թվական փոփոխությունների, ինչպես և Արևմտյան Հայաստանի վարչական ձևափոխությունների վերաբերյալ, որոնք ցույց են տալիս համաշխարհային առաջին պատերազմին նախորդած 50 տարիների ընթացքում հայ ազգաբնակչության նկատմամբ Թուրքիայում կիրառված ջարդարարական քաղաքականության էությունը։ Ժառանգելով այդ քաղաքականությունը Արդուլ Համիդից, Երիտթուրքերը ամենայն մանրամասնությամբ սկսեցին մշակել հայերի բնաջնջման ծրագիրը։ Հեղինակին հաջողվել է ճիշտ կերպով լուսաբանել Երիտթուրքերի վերնախավային հեղափոխությունը, փաստական հարուստ նյութի հիման վրա ցույց տալ Երիտթուրքերի տիրապետության օրոք պանիսլամիզմի և պանթուրքիզմի հետագա զարգացումն ու խորացումը։

Հեղինակն անդրադառնում է նաև հայերի գենոցիդի նախապատրաստման գործում թուրքական շովինիստական պրոպագանդայի կատարած դերին։ Այդ պրոպագանդան ամեն կերպ շարաչահում էր մահմեդական ֆանատիզմը, նրան հաղորդում ավելի սանձարձակ բնույթ։

Երիտթուրքական պրոպագանդան թունավորում էր թուրք ազգարնակչության գիտակցությունը ռասայական մոլեռանդությամբ, թուրքերին համարելով այնպիսի բարձր ազգ, որը կոչված է միայն տիրապետելու և իշխելու համար։ Օսմանյան կայսրության մեջ կիրառվող պաշտոնական քաղաքականության նպատակն այս խնդրում այն էր, որ ընչազուրկ և քաղցած ամբոխին իր բոլոր դժբախտությունների համար մեղավոր համարեր ոչ թուրք ժողովուրդներին։ Եվ այս հողի վրա ավելի էին խորանում ազգամիջյան ներհակությունները։ Երիտթուրքերը ժխտում էին ազգային հարցի առկայությունը և անտեսելով, որ թուրք ժողովրդի ազգային գիտակցության բարձրանալուն զուգընթաց բարձրանում էր նաև մյուս ժողովուրդների ազգային գիտակցությունը՝ ձգտում էին ակտիվ ասիմիլացիայի ենթարկել կայսրության ոչ թուրք ժողովուրդներին, շովինիստական մի նպատակ, որին հարմարեցնում էին իրենց գործունեությունը ինչպես պետական օրգանները, այնպես էլ թուրքական մամուլն ու զինվորական իշխանությունները։ Եվ ինչպես ճիշտ կերպով նշում է հեղինակը, որքան խորանում էր հուսախաբությունը սահմանադրական կարգերից, իթթիհատականների շովինիստական քաղաքականությունից, արևմտահայ ազգային բուրժուազիան, մտավորականությունը, երիտասարդությունը, ժողովրդի մյուս խավերը երես էին թեքում թուրքական պետական մարմիններից, հանգում այն եզրակացության, որ այդ նոր ռեժիմի պայմաններում նույնպես հայերը դատապարտված էին աստիճանական ոչնչացման, որ հայ մարդու կյանքի, գույքի, պատվի ապահովության խնդիրը չի կարող լուծվել թուրքական պետականության շրջանակներում։ Առաջին գլխի վերջում հեղինակը հանգում է ճիշտ եզրակացության, նշելով հայ ժողովրդի արևմտյան հատվածի բնաջնջման պլաններում արտաքին գործոնների համեմատությամբ ներքին ազդակի՝ թուրքական շովինիզմի սև դերի առաջնությունը։ «Մինչև 1914 թվականը,— գրում է նա,— երիտթուրքերի որդեգրած հայաջինջ գործելակերպը բարձրացված էր պետական քաղաքականության աստիճանի և միայն առիթ էր պետք, որ նա դառնար համապարփակ, ընդգրկեր ամբողջ արևմտահայությունը» (էջ 85)։

Աշխատության երկրորդ գլխում պատմական լայն ֆոնի վրա հեղինակը քննում է արևմտահայության ճակատագրի հետ կապված մի շարք էական հանգամանքներ, որոնք սերտորեն առընչվում էին արևելյան հարցում միջազգային դիվանագիտության և մեծ տերությունների զավթողական պլանների հետ՝ առաջին համաշխարհային պատերազմի նախապատրաստման և նրա ռանձազերծման սկզբնական շրջանում։ Նա անդրադառնում է բալկանյան պատերազմներին, որոնք առիթ հանդիսացան, որպեսզի Ռուսաստանի օգնությամբ թուրքական լուծը թոթափելու, արևմտահայությանը ազատագրելու հարցերը լայնորեն քննության առնվեին հայկական հարակայնության բոլոր շրջաններում։ Սորից վերարացվում էր հայկական հարցը դիվանագիտական խաղերի և կեղծ փարիսեցիական խոստումների ասպարեզ բացելով իմպերիալիստական տերությունների քաղաքականության համար։ Բնորոշելով այդ ժամանակ լայն տարածում գտած մտայնությունը, հեղինակը ճիշտ կերպով նշում է, որ ըստ էության թերագնահատվում էր թուրքական ռազմա-ֆեոդալական բռնապետության մահարեր ուժը և ընդհակառակը՝ գերագնահատվում եվրոպական դիվանագիտության, եվրոպական գործիչների պլատոնական ճառերի նշանակությունը։

Հեղինակը հանգամանորեն քննարկում է Արևմտյան Հայաստանում ակնկալվող բարենորոգումների հարցը, անդրադառնում կովկասահայ կուսակցությունների դիրքին։ Այս գլխում առանձնապես հաջող է վերլուծված ցարական կառավարության քաղաքականությունը հայկական հարցում։ Այդ վերլուծությունը նա կատարում է եվրոպական տերությունների հետ ռուսական կայսրության արտաքին հարաբերությունների բարդ ու հակասական ոլորտում, դույց տալով ցարիզմի հետապնդած իրական նպատակներն ու ձգտումները, որոնք ամբողջապես բխում էին նրա իմպերիալիստական պլաններից։ Ցարական կառավարությունը ամեն կերպ փորձում էր օգտագործել հայկական հարցը իր զավթողական նկրտումների իրագործման համար։ Հեղինակն զգալի տեղ է հատկացրել նաև այն նպատակների բացահայտմանը, որ հետապնդում էին կայզերական Գերմանիան, Անգլիան և Ֆրանսիան Մերձավոր Արևելքում, մասնավորապես արևմտահայության հարցում։ Եթե անգլիական և ֆրանսիական գաղութային շրջանները, նշում է նա, Թուրքիայում ուժեղ կապեր ունեին հայկական ու հունական առևտրական, գործարար շրջանների հետ և այդ կապերը որոշակի չափով մասնավոր բնույթ ունեին, ապա գերմանական կապիտալը հենվում էր թուրքական կառավարության օժանդակության վրա, կապված էր վեր բարձրացող թուրքական ազգային բուրժուազիայի, բուն պետական ապարատի հետ։

Հանգամանորեն բնութագրելով գերմանա-թուրքական մերձեցման նպատակներն ու նշանակությունը, հեղինակը հանգում է հետևյալ եզրակացության. «Գերմանական իմպերիալիզմի գաղափարախոսներն էին, որ հանդես եկան թուրքական կառավարողներին ուսուցանողի, նրանց կանիրալական մտահղացումներ պատվաստող-

ների դերում (էջ 138)։ Բազմաթիվ փաստերով մերկացնելով այն «նուրբ խաղը», որ ցուցադրում էին իմպերիալիստական Անգլիան ու Ֆրանսիան արևմտահայության հարցում, հեղինակը ցույց է տալիս նրանց հետևող դաղութատիրական-գավթողական ձգտումների բուն էությունը։ Անգլիան ամեն կերպ ձգտում էր կասեցնել Ռուսաստանի ազդեցության ոլորտի մեծացումը Արևելյան Անատոլիայում, վախենալով, որ այդ հանդամանքը հետագա սպառնալիք կդառնա բրիտանական գաղութային տիրապետությանը և զգալի հարված կհասցնի նրա գավթողական պլաններին։ Թուրքիայի ամբողջականության պահպանումը արևելյան սահմաններում, այսպիսով, շատ ձեռնտու էր Անգլիային և լիովին համապատասխանում էր նրա շահերին՝ մեծ տերությունների միջև ստեղծված ուժերի փոխհարաբերությունների պայմաններում։ Ֆրանսիան նույնպես հետապնդում էր քայքայվող օսմանյան կայսրությունից մաքսիմում բաժին կորզելու նպատակը և հայկական հարցի սրշխուժացումը լոկ պատեհ առիթ, հարմար միջոց էր ֆրանսիական դիվանագիտության ձեռքին՝ Թուրքիայի վրա ճնշում գործադրելու, իր բուն նպատակներին հասնելու համար։

Կանգ առնելով հայկական բարենորոգումների, Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդրում իմպերիալիստական տերությունների բռնած դիրքի վրա, բացահայտելով նրանց միջև առկա հակասությունները, ցույց տալով նրանց հետապնդած բուն նպատակները, հեղինակը հանդում է հետևյալ եզրակացության. «Այսպիսով, Արևմուտքի բուրժուական շրջանները, նրանց թերթերն ու գործիչները ամեն կերպ բորբոքում էին հայկական հարցը։ Ինչ խոսք, որ նրանց շարքում կային բարի կամեցողության բազմաթիվ սառաջադեմ մարդիկ, որոնք ազնիվ միտումներ ունեին, բարեկամական զգացմունքներ էին տածում բազմաչարչար հայ ժողովրդի նկատմամբ։ Բայց այդ ամենը օգտագործվում էր այն ժամանակ միջազգային կյանքում ամենազոր իմպերիալիզմի կողմից՝ իր ընչաքաղց պլաններին համապատասխան» (էջ 158)։

Աշխատության երկրորդ գլխում այնուհետև քննության են առնվում մի շարք հանգուցային հարցեր՝ կապված առաջին համաշխարհային պատերազմի սկզբնական շրջանի, պատերազմի մեջ Թուրքիայի մտնելու և այդ առնչությամբ Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդրում դրսևորված նոր երևույթների հետ։

Փաստալից ու հանգամանորեն է շարադրված նաև մենագրության երրորդ գլուխը, որը նվիրված է արևմտահայության գենոցիդին։ Հեղինակը ամենայն մանրամասնությամբ ցույց է տվել, որ երիտասարդ Թուրքերը պատերազմը համարում էին լավագույն առիթը՝ իրագործելու իրենց տանիրապետական և պանթուրքական ագրեսիվ ծրագրերը։ Ապահովելով Գերմանիայի աջակցությունը, նրանք պատերազմի սկզբի շրջանում իրագործեցին նախապես ծրագրած իրենց գազանային մտադրությունը՝ հայ ժողովրդի բնաջրնջումը տեղահանության անվան տակ։

Հեղինակն իրավացի կերպով շեշտում է այն իրողությունը, որ թուրք դահիճները հայերի մասսայական վտարումը դեպի արաբական անմարդաբնակ անապատները սկսել էին նախքան Վանի ինքնապաշտպանական կռիվները։ Նա կոնկրետ փաստերով ապացուցում է, որ հայերի տեղահանությունն ու բնաջնջումը Թուրքական կառավարության նախօրոք մշակած ծրագրի կենսագործումն էր։

Հեղինակը բազմաթիվ և խոսուն փաստերով կրկին անգամ հավաստում է, որ թե՛ Արևմտյան Հայաստանում և թե՛ օսմանյան կայսրության մյուս վիլայեթներում հայերի ջարդն ու կոտորածը եղել է համատարած, չեն խնայել ոչ ոքի։ Ամբողջական ջարդից մասամբ զերծ մնացին Թուրքիայի երկու քաղաքները միայն՝ Ստամբուլն ու Իզմիրը։ Երիտասարդ Թուրքերի կառավարությունը ոչ մի ջանք չէր խնայում քողարկելու իր ոճիրը, որը իրականացվում էր ամբողջ կայսրությունում։ Սակայն այդ բոլոր փորձերը անհետևանք մնացին։ Ամբողջ աշխարհին հայտնի դարձան երիտԹուրքերի անօրինակ գազանությունները։

Աշխատության այս գլխում զգալի տեղ է հատկացված արևմտահայության ինքնապաշտպանական կռիվներին։ Հեղինակը հանգամանորեն նկարագրում և գնահատում է այն հերոսական դիմադրությունը, որին հանդիպեցին թուրք ջարդարարները Վանում, Շապին-Գարահիսարում, Ուրֆայում, Մուսա լեռան վրա և այլ վայրերում։

Մենագրության մեջ առանձնակի խոսվում է նաև այն զանգվածային ջարդերի մասին, որ իրենց մշակած ծրագրին համապատասխան՝ ամենաբարբարոսական միջոցներով իրականացրին երիտԹուրքական կառավարողները 1915 թ. հետո, օսմանյան կայսրության հարավային շրջանները, գլխավորապես Միջագետքի, Սիրիայի անապատները քշված հարյուր հազարավոր հայ տարագիրների նկատմամբ, որոնք հիմնականում կանայք էին և յոթ տարեկանից ցածր երեխաներ։ Հեղինակի բերած բազմաթիվ փաստերը և դրանց համակողմանի վերլուծությունները հաստատում են նրա այն ընդհանրացումը, որ «թեև յուրաքանչյուր վիլայեթում կամ շրջանում հայ ժողովրդի տեղահանության, աքսորի կամ կոտորածի եղանակների, տեղական իշխանությունների գործելակերպի ու «հնարամտության» միջև առկա էին տարբերություններ,

առանձնահատկություններ, սակայն ընդհանուր առմամբ ամենուրեք կատարվում էր նույնը՝ բրուտակի սիստեմով և ծրագրով» (էջ 345)։

Աշխատության չորրորդ՝ վերջին գլխում լուսաբանվում է այն հարցը, թե ինչպիսի դերը բռնեց միջազգային իմպերիալիզմը 1915—1916 թթ. հայկական կոտորածների նկատմամբ։

Հեղինակը արդարացիորեն նկատում է, որ մեծ եղեռնի ժամանակ երիտթուրքերի կառավարությանը ամեն կերպ հովանավորում և օժանդակում էր Թուրքիայի դաշնակիցը՝ կայզերական Գերմանիան։ «Թուրքական ջարդարարական քաղաքականության գլխավոր ոգեշնչողը կայզերական Գերմանիան էր։ Այդ քաղաքականությունը համընկնում էր նրա էքսպանսիոնիստական, միլիտարիստական պլաններին... ինչպես ներքին ու արտաքին քաղաքականության բազմաթիվ հարցերում, հայկական հարցը յուրովի լուծելու գործում նույնպես, Էնվեր—Թալեաթ—Ջեմալ եռյակն ուներ Թուրքիայում ծառայող գերմանական զինվորականության և մյուս ներկայացուցիչների կատարյալ օժանդակությունը» (էջ 359)։

Ինչպես ցույց են տալիս փաստերը, երիտթուրքերի ղեկավարները (Էնվերը, Թալեաթը և մյուսները) հայկական կոտորածները իրագործելու իրենց դիվային ծրագրին նախօրոք տեղյակ են պահել գերմանական պաշտոնական անձանց և ստացել նրանց համաձայնությունը։ Գերմանական սպաները մի շարք տեղերում անմիջականորեն օժանդակում էին թուրքական կառավարությանը հայկական կոտորածները կազմակերպելու գործում, իսկ Վիլհելմ II-ի մերձավոր անձինք իրենց հրապարակային հայտարարությունների մեջ փորձում էին արդարացնել թուրքական ջարդարարներին։ Իրավացի էր Լոնդոնի «Թայմս» թերթի թղթակիցը, որը դեռևս 1916 թ. գրում էր. «Հայերի անխնա կոտորածը ատելության բռնկման հետևանք չէր։ Դա մտածված փորձ էր, կազմակերպված Կ. Պոլսում և ի կատար ածված գերմանական սպաների օգնությամբ, նպատակ ունենալով իրագործել «պանթուրքական դաղափարը» ըստ գերմանական գրող դոկտոր Ռորբախի ծրագրի» (էջ 369)։

Գերմանական կառավարության այս ոճակոմն, հակահայկական քաղաքականության դեմ իրենց ձայնը բարձրացրին գերմանացի մի շարք ազնիվ և առաջադեմ գործիչներ։ Առանձնապես պետք է նշել այն, որ գերմանական պրոլետարիատի առաջնորդ Կարլ Լիբկնեխտը 1916 թ. սկզբին հարցապնդումներ կատարեց ռայխստագում և մերկացրեց թուրքական դահիճներին ու նրանց գերմանական հովանավորողներին։ Աշխարհի առաջադիմական մամուլը արձագանքեց Կ. Լիբկնեխտի հարցում-բողոքին և այն պաշտպանություն գտավ շատերի կողմից։

Ո՞նչ դերը բռնեցին արևմտյան մյուս պետությունները՝ Անգլիան, Ֆրանսիան և Ամերիկայի Միացյալ Նահանգները։ Խոսելով այս մասին, Կիրակոսյանը իրավամբ նկատում է, որ հայ ժողովրդի իրավունքների ու արդար գործի մասին խոսող այդ տերությունները հայկական եղեռնի նկատմամբ ցուցաբերեցին հանցագործ անտարբերություն և չձեռնարկեցին ոչ մի գործնական քայլ՝ կանխելու կամ դադարեցնելու թուրքական ջարդարարների կողմից իրականացվող մեծ ոճիրը։ Մասնավորապես ամերիկյան կառավարությունը, որն, ինչպես հայտնի է, մինչ 1917 թ. չեզոք դիրք էր բռնել և չէր մասնակցում պատերազմին, կարող էր ազդել թուրքական կառավարության վրա, բայց նա չդիմեց վճռական միջամտության և սահմանափակվեց միայն ձևական հայտարարություններով։ 1915—1916 թթ. հայկական եղեռնի ժամանակ բոլոր «մեծ պետություններն» էլ հանդես բերեցին միայն երկերեսանիություն և փարիսեցիություն։

Գրքի վերջաբանում հեղինակը համառոտ կերպով կանգ է առնում այն ծանր քաղաքական վիճակի վրա, որ ստեղծվեց Անդրկովկասում և մասնավորապես Արևելյան Հայաստանում 1918 թ. թուրքական նոր ագրեսիայի հետևանքով։ Անհերքելի փաստերի հիման վրա հեղինակը դալիս է այն միանգամայն ճշմարիտ եզրակացության, թե հայ ժողովուրդը իր օրհասական վիճակից փրկվեց միայն շնորհիվ այն բանի, որ Հայաստանում հաստատվեց սովետական իշխանություն։

Ինչպես տեսնում ենք, Ջ. Կիրակոսյանի գրքում առաջ են քաշված և լուծված բազմաթիվ խնդիրներ, որոնց թվում և մի շարք խճողված, մինչև օրս չլուսաբանված հարցեր։ Հեղինակի հիմնական եզրակացությունները ճիշտ են և հիմնավոր։ Աշխատության մեջ, իհարկե, կան նաև ձևակերպումներ, մտքեր, որոնք կարող են առաջ բերել առարկություններ, բայց դրանք մեծ մասամբ կապված են երկրորդական հարցերի հետ։

Սեզ թվում է, որ գրքում պետք է տրվեր գրականության տեսություն։ Ընթերցողը շատ կշահեր, եթե իմանար, թե քննարկվող հարցերի վերաբերյալ ի՞նչ գրականություն և ի՞նչ տեսակետներ կան։

Հեղինակը կարողացել է գիտականորեն հաղթահարել թեմայի բարդությունը, որը կապված է ինչպես արծարծվող հարցերի բազմազանության, այնպես էլ այն հանգամանքի հետ, որ հայ ժողովրդի պատմության այդ ժամանակահատվածի մի շարք պրոբլեմներ դեռևս բավարար չափով չեն լուսաբանված մեր պատմագրության կողմից։ Ուսումնասիրելով և լայնորեն

օգտագործելով համապատասխան արխիվային նյութերը, պարբերական մամուլը և առկա պատմագիտական գրականությունը ինչպես հայերեն, այնպես էլ ռուսերեն և օտար լեզուներով, հեղինակը բազմակողմանի քննության է առնում արևմտահայության ճակատագիրը այն դժնդակ տարիներին, երբ իմպերիալիստական տերությունների սանձազերծած համաշխարհային պատերազմը նպաստավոր պայմաններ ստեղծեց երիտթուրքերի կառավարության համար՝ իրագործելու հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման նախապես մշակված իրենց հրեշավոր ծրագիրը։ Մեթոդոլոգիական ճիշտ ելակետը և պատմականության սկզբունքի կիրառումը, փաստական նյութի բազմակողմանի օգտագործման պայմաններում, հնարավորություն են տվել հեղինակին ստեղծելու արժեքավոր աշխատություն, որ կարդացվում է մեծ հետաքրքրությամբ։

Կ. ՔԱՐԱՄՅԱՆ

ԷԴՈՒԱՐԴ ՋՐԲԱՇՅԱՆ, *Թումանյանի պոեմները։* Պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 1964, 507 էջ, գինը 1 ռ. 14 կ.։

Թումանյանի, իբրև հայ ազգային ամենախոշոր բանաստեղծի գնահատման պատմությունը հետաքրքրական շատ կողմեր ունի։ Լավագույն թումանյանական ստեղծագործությունները նրանց հրապարակման տարիներին երբեմն սառը կամ մերժողական վերաբերմունքի են արժանացել։ 1910-ական թվականներից է սկիզբ առել Թումանյանի ստեղծագործության ուժն ու խորությունը աստիճանաբար հասկանալու և գնահատելու ժամանակաշրջանը։ Սակայն որքան էլ այդ զարմանալի թվա, դրականագիտական միտքը դեռևս երկար ժամանակ տարրեր, հաճախ լուրջ վերապահություններ էր անում Թումանյանի ստեղծագործության արժեքի վերաբերյալ։ Նույնիսկ Թումանյանին բարձր գնահատող գրականագետները թումանյանական հանճարի ողջ մեծությունը և կախարդանքը լիովին չէին տեսնում։ Հետաքրքրալուն է, որ ոչ թե գրականագետները, այլ գրողներն ու բանաստեղծներն էին առաջինը, որ զգացին, թե ինչպիսի հսկա է խոյացել հայ մշակույթի անդաստանում։

Միայն 1930 և մանավանդ 1940-ական թվականներից էր, որ գրականագիտական միտքը սկսեց ավելի խոր թափանցել Թումանյանի ստեղծագործության մեջ։ Սկսեցին լուրջ փորձեր անել Թումանյանի արվեստի, նրա մարդասիրական մեծ գաղափարների լիարժեք ըմբռնման ուղղությամբ։

Գրականագիտության ասպարեզում արդեն գիտակցվում էր Թումանյանի արվեստի իրական ուժը, բայց քիչ դեպքերում էր այդ գիտակցվածը խոր ու բազմակողմանի վերլուծության առարկա դառնում և հրապարակ հանվում։ Վաղուց ի վեր զգացվում էր մի ծանրակշիռ ուսումնասիրության պակասը։

Ահա այդպիսի ուսումնասիրություն է գրականագետ Էդուարդ Ջրբաշյանի «Թումանյանի պոեմները» գիրքը։ Այսօր դա ամենահանգամանալից և, ամենայն իրավամբ, ամենաարժեքավոր ուսումնասիրությունն է՝ նվիրված Թումանյանի ստեղծագործությանը։

Անկասկած է, որ Թումանյանի ստեղծագործության մեջ նրա պոեմները կենտրոնական տեղ ունեն, ուստի և կարողանալ ճիշտ գնահատել այդ պոեմները, նշանակում է հիմնականում ճիշտ արժեքավորել նաև դրողի ողջ ստեղծագործությունը։ Այստեղից էլ պարզ է, որ Ջրբաշյանի ընտրած թեման այնպիսին է, որ հաղթահարել այն, նշանակում է մի զգալի չափով հաղթահարել Թումանյանի ողջ ստեղծագործության գիտական գնահատման հարցը։ Մյուս կողմից, Թումանյանի ողջ ստեղծագործությունը մի անքակտելի միասնություն է, և ուսումնասիրության համար այնտեղից ընտրել զուտ ժանրային, այսինքն՝ ձևական առումով իրար հետ առնչվող մի շարք գործեր, փոքր-ինչ վտանգավոր է։ Մի աննկատ անզգուշություն, և գրականագետը կարող է ընկնել միակողմանի գնահատականների խարուսիկ ուղին։ Ջրբաշյանի գրքի մի կարևոր արժանիքն արդեն այն է, որ պոեմների քննությունը կատարված է Թումանյանի ողջ ստեղծագործության, ինչպես և նրա աշխարհայացքի, գեղագիտական ու բարոյագիտական ըմբռնումների ողջ համակարգի հաշվառմամբ՝ Թումանյանի պոեմները մեկուսացված չեն քննվում, այլ դիտվում են իբրև գրողի ստեղծագործության անբաժանելի օղակները և միշտ համադրվում ու համեմատվում են թումանյանական մյուս ստեղծագործությունների հետ, հաճախ վերլուծվում են նրանց օգնությամբ։ Նույնիսկ ավանդաբար իրարից տարբեր դիտված թումանյանական ստեղծագործությունները իրար համադրելով՝ հեղինակը ցույց է տալիս նրանց ներքին ընդհանրությունը։ Այդ տեսակետից ուշագրավ է «Դեպի անհունը»